ՄԱՀԳՈՅԺ

✠ ՀԱՅԱԳԻՏ ՕԳԻՍՏ ԿԱՌԻԷՐ

Ներկայ 1902 թուականի սկզբին եւրոպացի հայագէտների փոքրաթիւ խումբը հետեւաբար և հայագիտութիւնը մի շատ զգալի կորուստ ունեցան յանձին Ֆրանսիացի հայագէտ պրոֆէսոր Օգիւստ Կառիէրի, որ կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեցաւ Փարիզում անցեալ յունուար ամսի 14-ին՝ վաթսուն ու չորս տարեկան հասակում։

Օգիւստ Կառիէր — Ֆրանսիացի բողոքական ընտանիքի զաւակը ծնուած է 1838-ին իւր փառաւոր հայրենիքի Նորմանդիա գաւառում, և հարկաւոր կրթութիւնը ստանալուց յետոյ՝ գնում է նախ ծընէվ և Էքիպցիխ աստուածաբանական ու լեզուագիտական ուսմանց մէջ հմտանալու համար, և ապա՝ աւելի կատարելագործուելու նպատակով, եթէ չեմ սխալւում 1868-ին, տեղափոխւում է Ստրասբուրգ, որ այն ժամանակ Ֆրանսիային էր պատկանում։ Այստեղ շարունակելով լրացնել իւր ընտրած մասնագիտութիւնը նշանաւոր պրոֆէսորների առաջնորդութեամբ՝ ցանկութիւն և պատրաստութիւն է ունենում գրաւելու այս քաղաքի համալսարանի աստուածաբանական բաժնի տմբիոններից մէկը։ Սակայն Ֆրանս-պրուսական պատերազմը վրայ հասնելով՝ բոլորովին արգելք է լինում նորան իրագործելու իւր այն ցանկալի նպատակը։ Այնուհետև՝ խաղաղութիւնը վերահաստատելուց յետոյ, վերադառնում է Փարիզ, ուր հռչակաւոր Սորբոնի համալսարանին կից Ecole des hautes études կոչուած «Բարձրագոյն ուսմանց դպրոցում» 1871-ին ասորերէնի ու եբրայերէնի կրկնիչ — դասատու կարգուելով՝ շարունակում է դար-

ձեալ իւր սիրած մասնագիտութեանը վերաբերեալ սեմական լեզուներով զբաղուիլ։

1873-ի դեկտեմբեր ամսին էր, երբ Փարիզի «Արեւելեան լեզուների դպրոցի» քարտուղար պ. Սէդիլոյին փոխարինեց նոյն պաշտօնում Օգիւստ Կառիէրը, որ մի և նոյն ժամանակ գրադարանապետ անուանուելով՝ մի առանձին հոգս ունեցաւ նոյն դպրոցի արևելագիտութեամբ հարուստ գրադարանը կարգաւորելու։ Իսկ 1874 ի դպրոցական տարուայ հէնց սկզբից՝ վերոյիշեալ իւր բոլոր պաշտօնները վարելով հանդերձ, կամեցաւ նա ուսումնասիրել նոյնպէս հայոց լեզուն և այս նպատակով սկսեց հետևիլ նոյն Արևելեան դպրոցի հայկական դասախօսութիւններին, որ շատ տարիներ շարունակ գիտնական հմտութեամբ առաջ էր տանում մեր պրոֆէսոր Եդ. Դիւլօրիէն, որի մահուամբ և Օ. Կառիէրը 1881-ին նորա պաշտօնակատար կարգուեցաւ։

Ահա թէ ինչ էի գրում ես այս մասին «Արձագանքի» Փարիզից 1883-ին (համար 29) երրորդ անգամ Ֆրանսիայի մայրաքաղաքում գտնուած ժամանակս՝

«Այժմ անշուշտ հետաքրքիր ու ցանկալի է մեզ ամենաքիս իմանալ, թէ ինչ վիճակի մէջ է գտնուում արդեօք Արևելեան բարձրագոյն դպրոցի հայկական լեզուի ամբիոնը կորստաբեր մահից յետոյ գիտնական հայագէտ մեր պրոֆ. Եդ. Դիւլօրիէի, որի կենդանութեան ժամանակ, որպէս և այժմ դպրոցիս վարչութիւնը իւր ձեռքից եկածը չէ խնայում, որ հայագիտութիւնը Ֆրանսիայում ընդհանրապէս և Արևելեան դպրոցում մասնաւորապէս առաջ դնայ այն ճանապարհով, որով աւանդաբար ընթացել է շնորհիւ գիտնական հայագէտ ֆրանսիացիների մինչև ներկայ ժամանակս և, լուսով ենք, այսուհետև ևս։ Եւ ահա այս պատճառով արևելագէտ ու միևնոյն ժամանակ հայագէտ պ. Օ. Կառիէր՝ դպրոցիս քարտուղարը, որ Սորբոնին կից բարձրագոյն ուսմանց դպրոցի մէջ ևս եբրայական և ասորական լեզուների դասատու է, լիշեալ Արևելեան դպրոցի պրոֆէսորների և վերատեսուչ պ. Շէֆէրի հաւանութեամբ և ընտրութեամբ հասարակաց կրթութեան մինիստրից նշանակուած է հայկական լեզուի դասախօսի պաշտօնակատար 1881-ից ի վեր։ Պ. Կառիէրին է նոյնպէս յանձնուած թարգմանելու և աւարտելու «Մտեփաննոս Աստղիկ Տարօնացու ընդհանուր պատմութեան» երկրորդ հատորը, որ պիտի լոյս տեսնէ դպրոցիս հրատարակութեամբ, ինչպէս որ սոյն

« պատմագրիա առաջին հատորը, Ֆրանսերէն թարգմանուած « ու բացատրուած ծանօթութիւններով հանդերձ հանգու- « ցեալ Եղ. Դիւլորիէի ձեռքով, լոյս տեսաւ նորերս դար- « ձեալ լիշեալ դպրոցիս հրատարակութեամբ։ Այս աշխատու- « թեանը թարգմանիչ պ. Կառիէրը կաւելացնի մի ներա- « ծութիւն Ասողիկի պատմութեան և մի համառօտ տեղե- « կութիւն կրտալ պրոֆ Եղ. Դիւլորիէի կեանքի և աշխատա- « սիրութեանց մասին։ Մեր հանդուցեալ պրոֆէսորի լաջորդը « զբաղուած է նմանապէս լօրինելու մի քերականութիւն « հայոց լեզուի Ֆրանսիացիների համար, որոնք մինչև այժմ « Պէտերման հայագէտի քերականութեան վրայ էին ուսա- « նում հայերէնը, քերականութիւն, որ լատիներէնի միջ- « նորդութեամբ աւանդելով հայոց լեզուն Ֆրանսիացիներին « շատ անլարմարութիւն ունի... Այս տարի սեպտեմբերին « Հոլանդիայի Լէյդէ քաղաքում գումարուելու Արևելագէտ- « ների միջազգային ժողովին մասնակցելու է նոյնպէս պ. « Կառիէրը Ֆրանսիայի կողմից, որպէս քարտուղար և դա- « սախօս Փարիզի Արևելեան դպրոցի։ Սորան է յանձնուած « լիշեալ ժողովում ներկայացուելու և կարդացուելու պատ- « մական լիշատակարանների օրագրի կազմելը, որի թեր- « թերում մեր նոր հայագէտը մուծել է իւր մի նոր աշխա- « տութիւնը հետևեալ վերնագրով՝ «Արձանագրութիւն հայ- « կական մի տապանակի կամ Մասնատուփի», որ պատմա- « կան մի շատ հետաքրքիր լիշատակարան է և պատկանում « է տասներեքերորդ դարու ժամանակներին Կիլիկիայի հա- « յոց . . . »։

Այսպէս ուրեմն հանգուցեալ Օ. Կառիէրը այն ժամանակից սկսած շարունակելով թէ ի պաշտօնէ և թէ ուսումնասէր հրապուրմամբ զբաղուել հայագիտութեամբ՝ շաբաթը երկու անգամ դասախօսելով հայոց լեզուն ու դպրութիւնը Փարիզի Արևելեան դպրոցի մէջ քսան տարուայ ընթացքում, վերջին տարիները գրաւուեցաւ մանաւանդ պատմա-քննադատական հետազօտութիւններով, որոնց նիւթն էր գլխաւորապէս Մովսէս Խորենացին և իւր պատմութիւնը։ Այս հետազօտութիւններն էին, որ առաւելապէս հռչակեցին հայ բանասիրութեան և առհասարակ հայագիտութեան մէջ գիտնական անունը պրոֆէսոր Օ. Կառիէրի, որի բազմամեայ ուսումնական գործունէութեան մանրամասների վրայ խօսելը այստեղ մեզ շատ հեռու կը տանէր։ Մի կողմն թողնելով նոյնպէս հանգուցեալի և ներկայ գրութեան հեղինակի միջև փոխանակած բարեկամական մասնաւոր

նամակների նիւթը գրական այլ և այլ բովանդակութեամբ՝ առաջ բերենք ի սորև երբեմն մեր դասընկեր ցաւալի Կառիէրի հրատարակած գործերը, որ մեզ յայտնի են՝ ահաւասիկ — 1) Histoire universelle, par Etienne Açoghig de Daron, 2-ème partie traduite de l'arménien—II-րդ հատ. Ընդհանուր պատմութեան Ստեփաննոս Տարօնացու. 2) Inscription d'un Reliquaire arménien de la collection Basilewski—Արձանագրութիւն հայկական մի մասնատուփի Բազիլեվսկու հաւաքածուից քաղած. 3) Grammaire arménienne par M. Lauer, traduite, revue et augmentée d'une chrestomathie et d'un glossaire—Քերականութիւն հայոց լեզուի Մ. Լաուէրի Ֆրանսերէն թարգմանած, վերաքննած և լրացրած հատընտիր հատուածներով և բառգրքով. 4) Notice historique sur l'Ecole des langues orientales—Պատմական համառօտ տեղեկութիւն Արևելեան լեզուների դպրոցի մասին. 5) Moïse de Khoren et les Généalogies patriarcales—Մովսէս Խորենացին և նահապետական ծննդաբանութիւնները. 6) Nouvelles sources de Moïse de Khoren—Նոր աղբիւրներ Մ. Խորենացու. 7) La légende d'Abgar dans l'histoire de Moïse de Khoren—Աբգարի զրոյցը Մ. Խորենացու պատմութեան մէջ. 8) Les huit sanctuaires de l'Arménie payenne, d'après Agathange et Moïse de Khoren—Հեթանոս Հայաստանի ութը մեհեանները ըստ Ագաթանգեղոսի և Մ. Խորենացու. 9) Dictionnaire Latino-Arménien d'après un ancien manuscrit—Լատինահայ բառարան օրինակած մի հին ձեռագրից. վերջապէս 10) Հայերէն լեզուով գրած և «Բանասէր» հանդէսի մէջ զետեղուած «Լևոն Վ-րդի ընծայեալ Վարդն Ոսկեղէն» վերնագրով յօդուածը և այլն, և այլն։

Տեղւոյս լրագիրներին հաղորդեցին Փարիզից, թէ հանգուցեալ պրոֆէսոր Կառիէրին յաջորդել է արդէն, որպէս նորա պաշտօնակատար նոյն Արևելեան դպրոցում, երիտասարդ լեզուաբան-Հայագէտ պ. Ա. Մէյիէ, որ նոյնպէս դասատու է Սորբօնին կից «Բարձրագոյն ուսմանց դպրոցի» մէջ համեմատական լեզուագիտու-

թեան։ Պ. Մէլիէն, որ արևելագէտ բանասիրութեանը լայտնի է արդէն իւր մասնագիտական յօդուածներով և որ ուսումնական նպատակով ճանապարհորդութիւններ ևս արած է՝ անծանօթ չը պիտի լինի կարծեմ Թիֆլիսաբնակ մեր մի քանի հայ բանասէրներին ևս, որոնք առիթ պիտի ունենային տեսնելու նորան և ծանօթանալու մեր քաղաքում ներկայիս 4—5 տարի առաջ։

Սրտանց ցաւելով այն զգալի կորուստի վրայ, որ ունեցաւ հայագիտութիւնը յանձին Օ. Կառիէրի, մի և նոյն ժամանակ հոգով բարեմաղթում ենք ամեն տեսակ բարի ու շնորհաւոր յաջողութիւն երիտասարդ հայագէտ ա. Մէլիէին իւր այդ նոր պաշտօնում։

Ն. ՑԱՐՈՑ

✠ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆ

«Լումայի ներկայ համարը հրատարակուելու վերայ էր, երբ մի տխուր գոյժ հասաւ մեզ. փետրուարի 21-ին, առաւօտեան 7 ժամին, երկարատև հիւանդութիւնից յետոյ, վախճանուեցաւ Թիֆլիսում ամենքին ծանօթ կովկասագէտ Աղէքսանդր Երիցեանը 62 տարեկան հասակում։

Հանգուցեալը գիմնազիական կրթութիւն ունէր և բարձր ուսում չէր ստացել, բայց, ինչպէս լայտնի է, իւր ինքնակրթութեամբ և տոկուն աշխատութեամբ, զարգացման այն բարձրութեան է հասել իւր մասնագիտութեան նկատմամբ, որ շատ և շատ համալսարանական դրագէտներ պատիւ էին համարում դիմել նորան և օգտուիլ նորա անբաւ հմտութիւնից։

Երիցեանի գործունէութիւնը գրականում ընդարձակ էր և բեղմնաւոր. նա աշխատակցել է տեղւոյն հայ և ռուս գրեթէ բոլոր թերթերին, բայց նորա լաւագոյն աշխատութիւնները տպուել են «Փորձի» և «Արձագանքի» մէջ, որոնց մշտական և եռանդուն աշխատակիցն էր մինչև նոցա դադարումը։

Բացի դոցանից Երիցեանը թողել է և շատ աշխատութիւններ առանձին գրքերով, որոնց մէջ ամենից աչքի են

ընկնում Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը երկհատոր գործը և Ներսիսեան դպրոցի պատմութեան առաջին հատորը, և որոնք սակայն, ինչպէս և նորա գրեթէ բոլոր աշխատութիւնները, անաւարտ մնացին.

Մենք ի հարկէ դեռ կվերադառնանք Ա. Երիցեանի գըրական գործունէութեան.

Առ այժմ մեզ մնում է արտայայտել մեր խորին վիշտը հայ բանասիրութեան և պատմական գրականութեան այդ մեծ կորուստի վերայ, որ հաւասարապէս ողբացին հանգուցեալին յարգող ամեն ազգի գրագէտներ և լրագիրներ.

Երիցեանի թաղումը տեղի ունեցաւ բուն բարեկենդանի օրը, Վանքի ա. եկեղեցում ս. պատարագից յետոյ հանգուցեալի վերայ դամբանական խօսեց Ազգիս սրբազնագոյն Հայրապետը, իսկ Վանքի դաւթում վրաց լեզուով դամբանական կարդաց վրացի կովկասագէտ Ջանաշվիլին, դրուատելով հանգուցեալին որպէս գործող երկու դրացի ազգութիւնների անցեալ կեանքի ուսումնասիրութեան ասպարէզում.

Յաւիտենական հանգիստ անխոնջ վաստակաւորի ոսկրներին.